

ԿՐԹՆԵԿԱՆ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

«Բազում դաժեմ սասցան զմեծաբխեմ,
Բազումք արտաքին գործախեմ,
Բայց դու առաւել եղեք,
Եւ անցուցեք զամենեւումք:»
(ԱՌԱԿԱՑ ԼԱ. 29):

Տիրամայր Ս. Կոյսի Վերափոխման հրաշալի տօնին առթիւ որքան նպատակաւորամար պիտի ըլլար կիրարկել իմաստունին ժրագլուխ կնոջ և տիպար տանտիկնոջ ուղղած հրացական խօսքը. «Շատ մը դուստրեր հարստութիւն ստացան, շատեր զօրութիւն գործեցին. բայց դուռն առաւել եղար և գերազանցեցիր ամէնքը»: Արդարեւ, Տիրամայրը մարդկային պատմութեան մէջ կնոջական քնքուշ հոգիներէն միական եղաւ, առաջինն ու վերջինն ըլլալու պայմանով, որ բարոյական և հոգեւոր հարստութեան և զօրութեան մարմնացումով գերազանց կինը հանդիսացաւ իգական սեռի կոչումի իր արժանի բարձրութեան հասցուց, և արժանի եղաւ երկնքի բարձրութեան մէջ վերափոխուելու:

Մահը մահկանացունեցուս համար սահմանուած ամենէն անողոք օրէնքն է. մարդիկ սաստնական բոլորովին սահմանափակ կեանքի մը շրջանը բոլորելէ վերջ, կ'իյնան այդ օրէնքի տակ ու կ'անհետանան ժամանակին ու միջոցին մէջէն. Աստուածամայրն անգամ կը ննջէ. սակայն Ո. Կոյսի ննջման և վերափոխման պարագաներ իրենց ամբողջութեան մէջ գերազանց են և սքանչելի, խորհրդաւոր և միախառնական, ինչպէս Ս. Կոյսի կոչումն ու կենցաղը, ինչպէս անոր սկիզբը, նոյնպէս և վախճանը: Այսօր իգական սեռի ամենէն քնքուշ և ազնուական հոգին, նոյնինքն կնոջական և մայրական կոչման մարմնացումն է որ սուրբերու, առաքելաներու և ջահազգեաւորներով պայծառացած լապտերակիր սուրբ կոյսերու մէջէն, բացառելով քերթութենքերու և վեցեքեհան սերովութենքու հետ՝ վերափոխուելով՝ եօթնաստեղեան խորանները երբ կը մտնէ, այսօր՝ Անթառամ ծաղիկն ու համեղաճաշակ պտուղի բանաւոր բարունակը, նախամօր յանցանքներու ազատիչը, կուսութիւններու

մայրը, եօթնարփեան շնորհքներու ընդունարանը, վերին երուսաղէմի մէջ եղական ներուս համար անմասնելի եղող անապական առաքաստին երբ կ'արժանանայ, նոյնինքն Տէրն է որ կու գայ բազում հրեշտակներով ու կը պսակէ զայն փառաց պսակով և անմահական փառքով:

Հաւատացեալներս, սակայն, Վերափոխման առթիւ օր մը միայն հանդիսագրուած հրաշալի երեւոյթի արտաքին փայլէն իսպառհեռու, պարտինք խորանալ անոր ներքին և յաւիտենական գեղեցկութեան և արժէքին, անոր պատկաճմով լուսաւորելու համար մեր գիտակցութիւնն ու ճշմարիտ հաւատքը: Արդարեւ Վերափոխումը որքան Ս. Կոյսի փառքին արտաքինացումն ու հանդիսագրութիւնը, նոյնքան և անոր միախառնութեան մշտնջողիս աղբիւրն ու մեր յոյսին զբաւականն ու խորհուրդն է՝ Վերափոխումն աստուածային արդարութիւնը եղաւ անոր որ իր հաւատարմութեան և խոնարհութեան մէջ անհնարին տառապանքներու գաւառութիւնը ճաշակեց և որուն սիրտն սուրբն անցան. անոր՝ որուն համար իրօք և իրաւամբ կը վկայէ մարդկային խիղճը. «Շատ մը դուստրեր հարստութիւն ստացան, շատեր զօրութիւն ըրին, բայց դուռն առաւել եղար և գերազանցեցիր ամէնքը»: Վերափոխումը, վերջապէս, խորհուրդն է մեր յոյսին, ստեղծողը և ամօքիչ վստահութեան, թէ յանձին հրաշափառագոյն Ս. Կոյսին ունինք երկնային մայր մը զօրովազուած և բարեխօս մը զօրեղ:

Աւետարանի պարզունակ այլ խորիմաստ էջներուն մէջ, Փրկչի ծննդեան ու մսուրքին, ինչպէս նաեւ մահուան ու խաչին առջև Աստուածորդւոյն գիտակից մօր գէմքն է որ կը շողափայլի: Իսրայէլի հարստութիւն ստացող և կամ զօրութիւն գործող բազմաթիւ կոյսերու մէջէն՝ աստուածային անհասանելի նախախնամութիւնը Մարիամն էր սահմանած ըլլալու Մայրը Մեսիային: Եւ ան, որ իր կուսական անթուծութենէն մարմին, և հոգիէն հոգի էր ստուած իր Միածնին, զայն անոյց և դիցցոյց իր կաթին զուգընթաց ջամբող հոգւոյ կրտսիչի իր կողման բարձր և խոր գիտակցութեամբ իր որդւոյն նկատմամբ եղած յայտնութիւնները եպանէր ի սրտի իւրումդ և քայլ առ քայլ կը

հետևէր անոր ֆիզիքական և հոգեկան վերելքին, յամենայնի կարեկից և զօրավիզ հանդիսացաւ մինչև անոր խաչին պատուանդանին առջև: Ու այսպէս աշխարհի փրկութեան պատճառ եղաւ, միանգամայն արժանապէս շահեցաւ մայրութեան սուրբ կոչումը առաջին անգամ իր վայել բարձրութեան հասցնողի անթառամ պսակը, վասնզի մինչ հեթանոս կրօններու մէջ հայր մը անսահման իշխանութեամբ զօրացած ամենայն ինչ էր, և — ինչպէս կը կարծէր Արիստոտելը, նա միակ զօնընդին էր — մայր մը զայեակ էր լոկ, քրիստոնէութիւնով իրենց ջաղաքացիի իրաւանց տիրացան մայրն ու որդին: Քրիստոսի գալն ետքն է որ մայր մը և իր զաւակը միասին կը ներկայացուին քանդակագործութեան և նկարչութեան մէջ. կին մը իր զաւակը թեւեղան մէջ գրկած՝ Ս. Կոյսն Մարիամ ու Յիսուս, ինչ որ գեղարուեստական խորհրդանշան մը ըլլալէ բոլորովին վեր, գաղափարներու և բարոյականին մէջ եղած բարելւրում մըն է: Ստուգիւ մինչ այր մարդուն գործունէութեան գաղափարն է ընտանիքը, իր մասնաւոր պաշտօնն ու հայրենիքը, կնոջ գործունէութիւնը կը սահմանափակուի ընտանիքի պարունակին մէջ. նա կին է և մայր. և իբր այդ սահմանում է մանուկին հոգին ու նկարագիրը իր օրտով ու շունչով կերտելու գաստիարակչի գիտ և կոչման: Զաւակ մը երկուկուսն է իր մօր հոգւոյն, ինչպէս եղած են պատմութեան այնքան ծանօթ հոգեւորականները, Ս. Յովհան Ոսկեբերան հայրապետ, Սուրբ Օգոստինոս Հիպոլոնացի, Շալի Նիկիպատրուշեցի կաթողիկոս — որուն մայրը զայն կը գէշեր Դուինի կաթողիկոսարանի դրան առջև՝ զարմացողներուն պատասխանելով թէ կաթողիկոսութեան կը վարժեցնէ զայն — ու անհամար բազմութիւնը առաքելներու, մարտիրոսներու և սուրբերու: Սուրբ է մայրական կոչումը, այդ իսկ պատճառով ամէն կին մայր չլինար ըլլալ, մինչ ճշմարիտ մայրերը տիպար կիներ կը հանդիսանան:

Մեր պատմութեան մէջ — փառք Հայ Մայրերուն — անպակաս են Անուիթաներ, Ջուիկներ, Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, Շուշաններ, շուշանային անքձութեամբ օծուն հայուկիներ. ճշմա-

րիտ մայրերը հրեշտակներ կ'ըլլան, ու ամբարշտ կինները՝ հրէշներ: Կ'անցնի կնիք, բայց կը մնայ մայրն իր յիշատակով, և իր բարեմասնէզ զաւակներուն հրիտակած հոգեկան և բարոյական հարստութիւնով: Երանի՛ այն զաւակաց որոնք իրենց առջինեկ քայլերն առած են իրենց մօր խանդավառանքին ու գործվալց նայուածքին առջև, անոր ծունկերուն վրայ թոթոված են իրենց առաջին բառերն, անոր գրկաց մէջ ու շրթներէն ճաշակած են սիրոյ քաղցրութիւնը, և անոր կաթոգին նայուածքն ուսած են բարութիւնն ինքնին: Եւ երանի՛ այն մայրերուն, որոնց զապաղը մահուան կապուտ կողոպուտը փոխադրող և անիծեալ գործիք մը ըլլալէ իսպառ հեռու, ննջեցեալն ի դիր հանգստեան տանելու անգործվար մըն է, որոնց գերեզմանն ամենակուր անդենականին վրայ փորուած երախ մը ըլլալէ բոլորովին հեռու, անմահական կենաց վրայ բացուած մուտք մըն է, և որոնց ննջումն, ի վերջոյ, վերափոխում մըն է մահաւանդ: Այս իսկ է պատճառը սա իրողութեան, որ բողոքական Ամերիկան՝ այնքան ժառու և վերապահ հանդէպ Տիրամօր պաշտամունքին՝ ամէն Մայիսի երկրորդ կիրակին՝ ծաղիկներու բոյրին ու թոյրին կախարդանքով գեղուն՝ նուիրադործած է Մայրերու խնկելի յիշատակին: Մեր ժառանգակներու մեծ իմաստասէրին՝ Բանթի խօսքը յիշելով՝ թէ երկու բան զիս կը համակէ մշտանորոգ հիացումով և անսահման սքանչացումով — աստեղագորդ երկինքը գլխուս վերեւ, և բարոյական օրէնքներս — անվարան պիտի աւելցնէի երրորդ մը. այդ բարոյական օրէնքի ակնադրելը եղող մօր մը սիրտը, Տիրամօր սիրտը մահաւանդ:

Ս. Կոյսի վերափոխման իրաւական գոյութիւնը, սակայն, անոր տիպար մայրութեան հանգամանքին մէջ չէ միայն. առ այս մէկէ աւելի վկայութիւններ կան Աւետարանին մէջ. այսպէս, ժողովրդին մէջէն «Երաւնի զքեզ կրող որովայնին և զքեզ գիցնող ստինքներուն» բացազանցող կնոջ մը՝ Յիսուս յայտարարեց. «Մահաւանդ երանի աւնոց որոնք Աստուծոյ խօսքին կ'անսան և կը գործադրեն զայն» (Ղուկ. ԺԱ. 27): Դարձեալ, երբ Յիսուսին լուր բերին թէ իր մայրն ու «Եղբայրները» զուրբ կեցած են և զինք տեսնել կ'ուզեն, նա ըսաւ. «Ո՞վ է

իմ մայրս, կամ որո՞նք են իմ եղբայրներս: Եւ ձեռքն իր աշակերտներուն երկնցնելով ըսաւ. Ահաւաստիկ իմ մայրս ու եղբայրներս: Վասնից որք են երկինքը եղող չորս կամքը՝ այն է իմ եղբայրս, քոյրս և մայրս: Այս և այսորինակ վէպաութիւններէն կը հետեւի, թէ Ս. Կոյսի վերափոխման պատճառը պէտք է փնտռել անոր ոչ միայն երկնատուր շնորհաց, այլ նաեւ ստացիկ և հաւատքի հուրին մէջ ու կամքի սալին վրայ դարձնուած արժանեաց մէջ:

Գարձեալ Աւետարանի պատմութեան մէջ իր բոլոր առաւելութիւններով ներկայացուած Ս. Կոյսի ամենէն տիրական յատկանիշն է անոր կուսութիւնը: Յիսուս աւանապական ըլլալով՝ մարմնացաւ անապական և անարատ Մարիամէն, որ կոյս էր և կոյս մնաց հոգւով և մարմնով. տրուած ըլլալով որ Աստուած գերագոյն սրբութիւնն իսկ է, մարմին առած Բանին վրայ լրացած այս անբացատրելի միութիւնը Աստուծոյ և մարդուն միջև ներգաշակելու համար պէտք էր հրեշտակային մաքրութիւն մը, կուսական անարատութիւն մը: Եւ ինչպէս որ Ս. Իբերնարդոս գիտել կու տայ, պէտք է զարմանալ որ այս Կոյսին անարատութեան արժանիքը գեր ի վեր է քան հրեշտակներունը, ինչու որ անոնց մաքրութիւնն իրենց երանութիւնն և փառքի բնոյթին ու մենաշնորհին արդիւնքն է. միշտ զեռ Ս. Կոյսն անարատ էր ընտրութեամբ և առաքինութեամբ:

Թանձին Աստուածամօր տեսնուած կուսական ամբօթիւնը քրիստոնէական առաքինութիւններէն մին նկատուած է, առաքինութիւնը մը զոր պարտինք ի յայտ բերել ոչ թէ միայն մարմին, այլ և հաւատքի, գիտակցութեան, ազգային արժանապատուութեան, ընտանեկան սրբութեան տեսակէտներով. և «մարմնատեսիլ քերովքէ»ի այդ եղաւոր անարատութեան ակնարկելով է որ արքայապետ Նարեկացին կը հոգեբոգէ. «Ահա կաթիլ մի կաթին քուժդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ կենաց ինձ զօրէն»:

Ս. Կոյսի վերափոխման պատճառը, սակայն, ինչպէս որ անոր տիպոր մայրութեան և աստուածամայրութեան հանգամանքին մէջ էր, նմանապէս անոր կուսութեան մէջ չէ միայն: Անոր վերափոխման այսինքն երկնաւոր փառքի արժանացման եւ վայելած անսահման մխիթարութեան

պատճառը պէտք է փնտռել նաեւ անոր պարզ և համեստ հանգամանքներու մէջ. այսինքն անոր հաւատարմութեան, հընազանդութեան և խոնարհութեան մէջ: Իր երեք տարեկանին տաճար նուիրումէն մինչև Փրկչի փրկագործ անօրէնութեանց վախճանը՝ նա հաւատարիմ եղաւ իր կուսական մայրական կոչմանց, Աստուծոյ խօսքին ու պատգամին, օրէնքներուն և ներշնչուած մին, անոր կամքն ընելով իր ամենէն սուրբ օրէնքը, և այդ հաւատարմութեան ի սէր ենթարկուելով սիրտ խցոտող տառապանքներու նա հնազանդ էր Աստուծոյ բոլոր ցուցումներուն և ազգուններուն զորս կամարէր հոգեկին. Աստուծոյ ձեռքերուն մէջ հոգելից էակ մը ինքնին՝ որ գիտակից մահացուցման և հնազանդութեան կրթանքին մէջ ելեկտրականացած՝ միշտ պատրաստ էր Գերագոյն Սրբութեան կամքը կատարելու, և ամէն խորհուրդ, խօսք կամ գործ անոր կամքին ու փառքին համար ընելու: Եւ ի վերայ այս արժանայնի, Տիրամայրը խոնարհ էր յոյժ: Աստուծոյ աւանտարեք հրեշտակը զայն կ'ողջունէ իրբ Աստուծոյ չնորհի արժանացած, իր Աստուծոյ Որդւոյն մայրութեան կոչուած, բայց նա ինչզիմք զազախն Տեսնոնք կը հռչակէ: Եւ իր հրաշալի հոգեբաւութեան մէջ, որ խոնարհութեան գլուխ գործոց ներդրողն է, նա կը փառաւորէ Տէրը. «Ձի հայեցաւ ի խոնարհութիւն աղանդոյ իւրոյ»: Ահա այս խոնարհութիւնն էր որ հիացուց երկինքը և Աստուծոյ Որդին յօժարեցոյց չոր ծոցէն խոնարհելով Ս. Կոյսի գրկին մէջ պարփակուելու: Եւ ինչպէս որ սուրբն Ամբրոսիոս կը բացագանչէ. Մարիամ ի խոնարհութիւնը որ Մարգեղութեան Սրբուհուրդին մէջ կրցաւ զԱստուած յերկիր ինքնին, նմանապէս զօրեց մաքրամաքուր էակ մը երկինքի բարձրութեան հանելու: Եւ այդ իսկ պատճառով՝ խոնարհութիւնը քրիստոնէական առաքինութեանց մէջ մեծագոյնն էրէն է. հպարտներն ու ամէն անոնք որոնք խոնարհ չեն՝ Աստուծոյ արքայութիւնը չեն կրնար տառապել, քիչ իր յայտարարէ Պօղոս Առաքեալ. Նոյն ինքն Փրկչի երանի կը կարգայ հեզոց. նա որ խոնարհութեան գերագոյն մարմնացումն եղաւ ու ըսաւ. «Եկա՛յք առ իս . . . զի հեզ եմ և խոնարհ սրտով»: «Այո, կարելի է մեծ ըլլալ և խոնարհ

ըլլալ, և մեծեքու առաւելութիւնը այն է որ կրնան իրենց խոնարհութեան մէջ խնդիրներ իրենց կացութիւնը սրբաշնորհք բան մը, և իրենց կացութեան մէջ գտնել բան մը որ իրենց խոնարհութիւնն ամենէն սուրբն ու ամենէն թանկագինն ընծայէ առաջի Աստուծոյն: Սուրբ Կոյսը երկինքի բարձրութեան փոխեցաւ ինչու որ ամբողջովին խոնարհեցաւ իր հաւատարմի և հնազանդ հոգւոյն բովանդակ խորութեամբը:

* * *

Ո՛վ Սուրբ Մարիամ, դուն որ երկինքի Իսկուհին, Երանուհին, Թագուհին ու Սրբուհին ես, բարեխօսէ՛ որ մեր մայրերն ու քոյրերը տաժանագին կրթանքով և անհամեմատ զոհողութիւններով կարենան ըլլալ քեզի ճշմարիտ անուանակիցներ, և իբր իսկական և երանելի հոգիներ արժանանան սրբութեան քաղին: Հրեշտակ ի մարդկանէ, որ զերգանց մայրն եղար, բարեխօսէ՛ բոլոր մայրերուն համար, որպէսզի կարենան Աստուծոյ կամբքին հաճելի բարձրութեան և շնորհքի մէջ պահել մայրական սուրբ կոչումը: Մարմնատեսիլ քեզի վրէ, քու կուսական անքնութեան շնորհէն կաթիլ մը ցողէ բոլոր կոյսերուն և կուսական հոգիներուն վրայ, որպէսզի կարենան անաղարտ և սուրբ պահել բովանդակ նուիրականութիւններն ու սրբութիւնները: Մեղեք Աստուծոյ, որ Աստուածորդին առ մեզ ինքեցեցիք քու խոնարհութեամբ, բարեխօսէ՛ մարդկային ազգի վերջափունքին ծննդեան և փրկութեան համար: Խորան Բարձրելոյ և Տաճար Սրբութեան, որ Ս. Հոգւոյն ընդունարան հանդիսանալով կենաց և շքեղ շնորհակց արժանիքներով զանգեցիր, բարեխօսէ՛ որ մեղաւորներս ըլլանք մէկ մէկ կենդանի տաճար ու խորան Աստուծոյ: Աղաչեա՛ վառ մեր զառէքէն զմարմնացեալն Աստուած, որպէսզի Վերափոխանդ հրաշալի փառքին, անոր առթած միջոցառութեան և մեզի ներշնչած յոյսի խորհուրդին առջև, թէ երկինքի գոռը մեզի համար ալ բաց է և թէ յանձինք քու ներքէն հզօր բարեխօս մը, ըլլանք հնազանդ և արի, հաւատարմի ու խոնարհ:

ՇԱԽԱՐՇ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՐԾՆԱՓԻԼԻՍՈՓԵՅԱԿՆԸ

ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

«Իրականութեան աշխարհը
արժեքներու աշխարհն է»:
ՊՐԱՏԼԻ

Կամքը կը գործէ միշտ ի խնդիր Արժեքի կամ Բարիին զոր ստեղծելը կամ վայելելը իր գործունէութեան առանցքը կը կազմէ: Այո, կամքը ճիշդ աշխարհ գործելուն համար է որ ինքն իր մէջ ունի իր բացաւարութիւնը, և ինքն իրմով հասկնալի է ու Ասիկա պիտի առաջնորդէ մեզ, անկախելու որ ինչ որ կամքը կը ստեղծէ կամ ինքնիւն Բարի է, կամ միջոց մըն է Բարիին: Աւելին: Եթէ ինչ որ ստեղծուած է՝ Բարի է, ոչ միայն իբրեւ միջոց մը՝ այլ ըստ ինքեան, կը հետեւի որ անոր բուն իսկ էութիւնը կամ գոյացութիւնը Բարի է ու Աւելի հոգեւեները չեն երթար ըսելու որ Բարին էութիւնը կամ գոյացութիւնն է բոլոր գոյ եղող բաներուն: Բայց իրաւունք ունինք, նոյնիսկ հարկադրուած ենք ընդունուած ենթադրութեան կողմէ՝ ըսելու թէ ինչ որ գոյ է պէտք է կամ միջոց մը ըլլայ գոյացապէս Բարի բանի մը և կամ ըստ ինքեան գոյացապէս Բարի բան մը ըլլայ: Ըստ այսմ կը մտնենք նոր հարցի մը մէջ իրականութեան եւ Արժեքի յարաբերութեան մասին:

Այն անձկութիւնները, որոնց ենթակալ է ժամանակակից իմաստասիրութիւնը, Տիեզերքի մասին բացատրութիւն մը գտնելու իր ճիգերուն մէջ, պիտի փառալին հիմէ որոնէ այդ բացատրութիւնը Աստուծոյ լիակատար ըմբռնումի մը մէջ և ներկայացնէ զայն կամքի եղբրով:

Հարցը զոր պիտի հետապնդեմ այժմ սա է. պէ՛տք է ըմբռնենք իբրեւ իբրեւ իրարմէ անկախաբար գոյութիւն ունեցող բաներ, որոնք Արժեքը իբրեւ յատկութիւն ունին, թէ՛ պէտք է խորհինք Արժեքի մասին իբրեւ ինքնին ճշմարիտ իրականութիւնը որ կ'իրադրուի իր զանազան ձևերը՝ որպէսզի իրականութիւնը ինքզինքը իբրեւ մէջ — կամ ստեղծելով իրերը այլ նպատակին համար՝ շնորհիւ Աստուծոյն կամքին:

Կը կարծեմ թէ մեր դժուարութիւնը կը ծագի այն իրողութենէն որ՝ իմաստա-